ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 մայիսի 2025 թվականի N 618 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 1699-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետությունում «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2204, 2205, 2206 00, 2207 և 2208 ծածկագրերին դասվող ապրանքների՝ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում նույնականացման միջոցներով դրոշմավորման կանոնները հաստատելու մասին» N 1699-Ն որոշման մեջ (այսուհետ՝ որոշում) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետը «դրոշմավորման ենթակա ապրանքների» բառերից հետո լրացնել «, իսկ 2026 թվականի հունվարի 1-ից՝ 390-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ ԱՏԳ ԱԱ 2208 ծածկագրին դասվող՝ մինչև 9 տոկոս ներառյալ սպիրտայնություն ունեցող՝ դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա ապրանքների» բառերով.

2) որոշման 2-րդ կետը «դրոշմավորված» բառից առաջ լրացնել «, իսկ 390-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ ԱՏԳ ԱԱ 2208 ծածկագրին դասվող՝ մինչև 9 տոկոս ներառյալ սպիրտայնություն ունեցող՝ դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա ապրանքները՝ մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ներկայացված՝ օրենսգրքի 393-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան՝ դրոշմապիտակների տրամադրման հայտերի (այսուհետ՝ հայտեր) հիման վրա ստացված դրոշմապիտակներով» բառերով.

3) որոշման 3-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3.1-ին կետով.

«3.1. Սահմանել, որ՝

1) 2026 թվականի հունվարի 1-ից սկսած ներկայացված հայտերի հիման վրա ստացված դրոշմապիտակների վերաբերյալ ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների վերագրման, հաշվառման էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով գրանցումներ ԱՏԳ ԱԱ 2208 ծածկագրին դասվող՝ մինչև 9 տոկոս ներառյալ սպիրտայնություն ունեցող ապրանքների համար չեն կարող կատարվել.

2) ԱՏԳ ԱԱ 2208 ծածկագրին դասվող՝ մինչև 9 տոկոս ներառյալ սպիրտայնություն ունեցող ապրանքների՝ նույնականացման միջոցներով դրոշմավորումը կարող է իրականացվել նաև մինչև 2026 թվականի հունվարի 1-ը.

3) սույն կետի 2-րդ ենթակետին համապատասխան՝ ԱՏԳ ԱԱ 2208 ծածկագրին դասվող՝ մինչև 9 տոկոս ներառյալ սպիրտայնություն ունեցող ապրանքների՝ նույնականացման միջոցներով դրոշմավորման դեպքում, հարկ վճարողի կողմից այդ ապրանքների դրոշմավորումը դրոշմապիտակներով չի կարող իրականացվել:».

4) որոշման 4-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4.1-ին կետով.

«4.1. ԱՏԳ ԱԱ 2208 ծածկագրին դասվող՝ մինչև 9 տոկոս ներառյալ սպիրտայնություն ունեցող ապրանքներ ներմուծող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորումը

կարող են իրականացնել «ներքին սպառման համար բացթողում» կամ «վերա-ներմուծում» մաքսային ընթացակարգերով ձևակերպելուց հետո՝ հետևյալ պահանջ-ները բավարարող պահեստում՝

1) պահեստը պետք է լինի դրոշմավորման ենթակա ապրանքներ ներմուծող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին սեփականության իրա-վունքով պատկանող կամ պայմանագրային հիմունքներով՝ վարձակալված կամ այլ պայմանագրային համաձայնությամբ օգտագործվող, ինչպես նաև դրոշմա-վորման ենթակա ապրանքների դրոշմավորումը կարող է կատարվել այլ իրա-վաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից՝ դրոշմավորման ենթակա ապրանքների շրջանառություն իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հետ կնքված համապատասխան ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա.

2) պահեստում դրոշմավորման ենթակա ապրանքները պետք է գտնվեն գնորդի համար ոչ տեսանելի վայրում, տեղադրված չլինեն ցուցադրման համար։».

5) որոշման N 1 հավելվածի 1-ին կետում՝

ա. «(այսուհետ՝ օրենսգիրք) 389-րդ հոդվածի 1-ին մասով» բառերը փոխա-րինել «389-րդ հոդվածի 1-ին մասով և 390-րդ հոդվածի 1-ին մասով» բառերով,

բ. 2-րդ ենթակետից հանել «, ինչպես նաև ԱՏԳ ԱԱ 2208 ծածկագրին դաս-վող՝ մինչև 9 տոկոս ներառյալ սպիրտայնություն ունեցող սպիրտային խմիչքները» բառերը։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

22.05.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ